

ցը: Ն. Շնորհալին իր Առակներուն մէջ երկինքը կը նմանցնէ տաճարին. «Եկեղեցին բարձր էր եւ լայն... կանթեղքն ի կախ անշուան» (Չափ. 570), ուր հայկականները չուանաւոր էին: «Պորհուրդ եկեղեցւոյ» ճառը կու տայ այս մանրամասնութիւնները. «կանթեղ բարձեալ ունի գլուխն եւ գծէքն եւ գոյսն... Ջուր ի նմին արկեալ, եւ ձէթ ի վերայ ծաւալեալ, եւ լոյս՝ որ դամբնայն լուսաւորէ»: Ս. Ղազարու 1648ի Տաղարանը կը հաստատէ նոյն տարրերը, գրելով. «Մտիկ կանթեղին արա՝ որ հոլքն ու ջուրն ու ձէթն է լարան» (387): Նախորդ ճառը կը շարունակէ՝ թէ կանթեղը «ընդ Երից ստեանցն (կարգա ստեղանցն) կախեալ» է որ էին երեք կարկառուն մասերը, որոնց կը յարէին «լարքն». եւ ամէնէն վեր «ճախարակն», որու վրայ կը խաղար վերամբարձ չուանը (488): Ստուար ու ծանր կանթեղները չունէին այդ շարժումը. ասոր համար Թովմա Մեծոփեցին կը պատմէ՝ թէ «Մերոնի այր մի առեալ լապտեր ի ձեռս իւր, եւ ի վերին կամար եկեղեցւոյն, եւ վառեաց զմեծ կանթեղ եկեղեցւոյ»: Հոս վառուողը «լապտեր» է կամ կը կոչուի, ինչ որ Լամբրոնացին «խարոյկ» անուանեց:

Կան ցանցաւ յիշատակներ հին կանթեղներու: Այսպէս կը յիշուի Մտ. Ուռ-հայեցիէն «կանթեղն՝ որ կայր ի գումպէթ տաճարին» Պիպու վանքին, զոր կառուցած էր Գագիկ Բ. Թագաւորը (221): Տիգրան Հոննց, 1215ին, Անիի Լուսաւորիչը, զոր ինքն իսկ շինեց, կը դարձարէ «կանթեղաւ ոսկի եւ արծաթի»⁽³¹⁾: Նիկողոս Մառնոյն ոտանին Գագիկէն Ս. Գրիգորի պեղումներէն գտաւ արոյրէ կանթեղներ՝ աւետարանի պատմութիւններու ձուլածոյ տեսարաններով⁽³²⁾: Անկիւրիոյ վանքի յիշատակագրին մէջ, որ կը պահուի Ս. Ղազար, կը կարգանք՝ թէ 1469ին նուէր կը տրուի եկեղեցւոյն «Երկու պղնձէ կանթեղ», եւ ուրիշ անձ մ'ալ կ'ընծայէ «եկե-

ղեցուն կանթեղանն չուանն» (63-64), որ իր կարեւորութիւնն ունի՝ նուիրուելու եւ յիշուելու չափ:

7. Լապտեր. — Յունական լապտեր բառն է, որուն Դարեմբերգի բառարանը կու տայ չորս նշանակութիւն. աշտանակ (կանդելաբրում), լապտեր (լանտեռնա), ֆրագ (լուկեռնա) եւ ջահ (Փաքս. Գ. 914): Բայց հայերէնի մէջ այդ կոչումները ունին արդէն իրենց սեփական անունները, որով չենք կարող որոնել զանոնք մեր լապտերին մէջ, ուր կարելի է տեսնել նոյն իմաստներէն մէկը միայն, լանտեռնան, որ ճրագին բարդ ձեւն էր, իր ներսն ունենալով լոյսը (անդ՝ 925), եւ դիւրատար դառնալով ճանապարհի մէջ, ինչպէս էին Հոգեպետները՝ երբ ընդ առաջ ելաւ Յուդէի «լապտերօք արծաթեօք» (Ժ, 19) Աւետարանի տասը կոյսերունը, որոնց ձէթն ալ յիշուած է (Մտթ. ԻԵ.), եւ Յիսուսի ձերբակալութեան ժամուն Հրեաներու կրածները, (Յճ. ԺԶ), ուր յոյն բնագիրը կը գրէ միշտ լապտա, եւ զոր Դարեմբերգի բառարանը ընդհանուր կոչում մը կը համարի լուսատու անօթներու (Գ, 914). Իսկ հայ թարգմանիչը կը մասնաւորէ դայն անփոփոխ լապտերով, ինչպէս կը պահանջէին յիշատակութիւններուն մէջ նկարուած տեղերն ալ: Սա կը գործածուէր նաեւ փակ վայրերու մէջ, ինչպէս էր Տրովադայի վերնատունը:

Հայ եկեղեցին եւս ընդունեցաւ դայն, եւ դրաւ Դ. դարէն Հոփոսիմեանց վկայարաններուն մէջ, ինչպէս տեսանք, եւ յետոյ կը յիշատակուին ուրիշներէ: Այսպէս յայտնի է Ղեւոնդի՝ Բագուանու Ս. Գրիգորի «պայծառութիւն լապտերացն». Օձնեցիի կարծուած «Օրհնութիւն նորաչէն եկեղեցւոյ» կը յիշէ ու կը մեկնէ «վառումն լապտերացն», եւ երկրորդ ճառը՝ «ղապտերացն լուսմունի» (129, 140): Ա. Լաստիվերտցին կ'անարկէ ընդհանուր կերպով «անշէջ լապտերացն եւ ջահիցն վառ-

ԲԱՐԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՋ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆՆՆ)

1951ին, Elma Marin արարեցին թարգմանելով հրատարակեց եւ ծանօթագրեց Ալ-Մուտալիմ Պաղտատի Խալիֆային տիրակալութեան շրջանին (833-842) պատմութիւնը, առնելով Ապու Ճաֆար Մուհամմատ Պ. Ճարիր Ալ-Տաբարիի ընդարձակ դործէն:

Տաբարիի կարեւորագոյն աղբիւրն է մեր պատմութեան մէկ էջին, այսինքն Բաբալի Հայաստան ապաստանելուն, իր եղբոր հետ միասին, եւ Սահլ Իպն Մնբատէ՝ ալ-Աֆշին արաբ զօրավարին յանձնուելուն: Այս դէպքը պատահեցաւ 837ին: Տաբարի, որ հեղինակն է արժէքաւոր պատմութեան մը, այս դէպքէն գրեթէ երկու տարի վերջ ծնած ըլլալով, կրցեր է վտահայտել տեղեկութիւններ հաւաքել եւ իր պատմութեան մէջ ընդգրկուել:

Տաբարիի պատմութիւնը ճոխ է Հայոց եւ Հայաստանի վերաբերող նիւթերով:

ման» հայ եկեղեցիներու մէջ (35): Եւ Ն. Լամբրոնացիին ընտանի են «լուցմունք ջահիցն եւ լապտերացն» (Պար. 131): Այդ բառը այս շրջանին կիրարկուած այդպէս միայնակ կամ ջահին հետ, անշուշտ կը նշանակէր այն իսկ՝ որ «կանթեղ» կոչուած է ուրիշներէ, եւ այս վկաններէն անշուշտ մնացած: Կ'ուզեմ ըսել կորուրած հին ձեւը, կամ լաւ եւս՝ գործածութիւնը եկեղեցւոյ մէջ, եւ անունը հոմանիշ դարձած միւսին հետ: Յիշեցինք մեծ կանթեղներու վառումը լապտերի լոյսով, ԺԵ. դարուն: Նոյն շրջանին լապտերն առած է մոմեղէնի նշանակութիւնն ալ:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ
(Շարունակելի)

սակայն եւ հոս միայն նկատի պիտի ունենամ Բաբալի Հայաստան ապաստանելուն եւ յանձնուելուն մասը, որոնք դժբախտաբար մեր պատմիչները թէ՛ անկատար եւ թէ՛ սխալ ներկայացուցած են:

Տաբարի կը գրէ թէ Բաբալ պարտուեցաւ ալ-Աֆշինէ՝ Ատրպատականի մէջ. «Որուն վրայ, Բաբալ իր երկու եղբայրներուն հետ, Ապու Ալլահ եւ Մուալիեա, եւ իր մօր ու կիներէն մէկուն հետ, կոչուած ալ-Քալանդանիեա, ճամբայ ելաւ՝ թողլով ճանապարհը եւ երթալով դէպի Հայաստանի ուղղութեամբ»:

«Երկու հեծեալները եւ երկու լեռնականները (որոնք ճանապարհին վրայ կը հսկէին — Յ. Ք.) տեսան զանոնք եւ լուր գրկեցին Ապու Սաճի հրամանին տակ գրտնուող զօրքերուն, ըսելով. Մենք ձիաւորներ տեսանք՝ որ ասկէ անցան, սակայն չենք գիտեր թէ ով էին: Այն ատեն մարդիկ արշաւեցին եւ պնդեցին յառաջ, մինչեւ որ զանոնք (Բաբալը) տեսան հեռուէն. անոնք աղբիւրի մը մօտ կեցած էին եւ անոր վրայ կը ճաչէին: Բայց երբ Ան-հաւատը (Բաբալ) տեսաւ մարդիկը՝ ժամանակ չկորսնցուց. ան եւ իր հետեւորդները յառաջ ձիավարեցին եւ ան կրցաւ խուսափիլ. սակայն Մուալիեա եւ Բաբալի մայրն ու կիներ՝ որ անոր հետ էին՝ բռնուեցան: Բաբալին գերիներէն մին խուսափեցաւ: Ապու Սաճ գրկեց Մուալիեան եւ երկու կիները բանակատեղ, բայց Բաբալ գնաց իր գացած ուղղութեամբ, մինչեւ որ հասաւ Հայկական լեռները եւ հոն ճամբորդեց անշուշտ: Ան խիստ կարիք ունէր ուտեստի. սակայն բոլոր հայ ազնւականները կը հսկէին իրենց անմիջական մերձակութեանց եւ անոնց չըջակալքին վրայ, եւ իրենց պահակազօրքին հրամա-

(31) Աւելան Հ. Ղ. Շիրակ, 75:

(32) Արարատ ամս. 1911, 661-62:

յաճ էին թող չտալ ունէ մէկուն անցնիլ նախ քան անոնց ձերբակալուիլը եւ իրենց ինքնութեան հաստատուիլը. պահակազօրքի բոլոր հրամանատարները աչալուրջ էին»:

«Բարակ անօթեցաւ: Ան կը գտնուէր բարձրութեան մը վրայ, երբ յանկարծ տեսաւ հերկարար մը որ իր արտը կը հերկէր հովիտներէն մէկուն մէջ. ըսաւ իր գերին. Գնա այդ հերկարարին եւ առ տիւնար ու տիրիւմներ (ոսկի) քեզի հետ. եւ եթէ ան հաց ունի իր բով՝ առ եւ դրամը իրեն տուր: Արդ հերկարարը ունէր ընկեր մը որ պատճառաւ մը հեռացած էր. եւ երբ գերին վար եկաւ հերկարարին, անոր ընկերը հեռուէն տեսաւ եւ հոն սպասեց, վախճալով իր ընկերով մօտեցող օտարականէն, եւ այսպէս գիտեց տեսնելու թէ վերջինս ինչ պիտի ընէր: Գերին բան մը մղեց՝ եկող հերկարարին, եւ ան հաց անտելով գերին տուաւ, բայց իր ընկերը, հեռուն մնալով, գիտեց եւ խորհեցաւ. Արդարեւ այս օտարականը անկէ իր հացը բռնութեամբ կ'առնէ, որովհետեւ ինք չը խորհեցաւ թէ գերին փոխարէն բան մը տուած էր անոր: Ան վազեց պահակազօրքին եւ ըսաւ անոնց որ մարդ մը եկած էր սուրով եւ զէնքերով եւ թէ զաշտին մէջ գտնուող իր ընկերով հացը խլած էր: Պահակազօրքին հրամանատարը ձիավարեց. եւ որովհետեւ ասիկա տեղի կ'ունենար Իսկ Սնրատի լեռներուն մէջ, այս տեղեկութիւնը զրկեց Սահլ Իսկ Սնրատի, որ արագօրէն ձիավարեց մարդոցմով, մինչեւ որ անոր հասաւ: Երբ հերկարարին հասաւ, գերին գեռ անոր հետ էր եւ ան (Սահլ) ըսաւ. Ի՞նչ կը կատարուի հոս:

Այս մարդը բովէս կ'անցնէր, ըսաւ հերկարարը, հաց ուզեց եւ եւ իրեն տուի:

Ո՛ր է տէրդ, հարցուց Իսկ Սնրատ գերին՝ որ պատասխանեց. Հոն. եւ իր զրուխը շարժեց այն կողմ: Իսկ Սնրատ հետեւեցաւ անոր մինչեւ որ Բարակին հասաւ, որ վար կ'իջնէր (լեռնէն). եւ երբ գէժքը տեսաւ՝ ճանչցաւ, որով ան (Սահլ) իջաւ ձիէն եւ մօտենալով անոր ձեռքը

համբուրեց: Որուն վրայ ան ըսաւ. Եղով, տէր իմ, ո՞ր կ'երթաս:

Բարակ պատասխանեց. Ես կը ցանկամ Բիւզանդական երկիրը հասնիլ:

Դուն ոչ մէկ տեղ կամ անձ պիտի գտնես որ պիտի ֆանչնայ քու իրաւունքդ ինծմէ աւելի: Իսկ Սնրատ պատասխանեց. Եւ ո՞վ է որ աւելի արժանի ըլլայ քու այցելութեանդ: Դուն գիտես իմ դիրքս. յարաբերութիւն չկայ իմ եւ կեդրոնական (Խալիֆայական) կառավարութեան միջեւ, եւ դուն չես գար կառավարութեան բարեկամներէն միոյն մօտ: Քեզի ծանօթ են իմ գործերս, իմ երկիրս եւ բոլոր ազնուականները որ հոս են: Արդարեւ, անոնք քու տանդ մարդիկն են, անոնցմէ որդիներ եկած են քեզի: Ատով ըսել կ'ուզէր՝ որ նախապէս երբ Բարակ կ'իմանար թէ ազնուականներէն մին գեղեցիկ դուտոր մը կամ քոյր մը ունէր, մարդ կը զրկէր զայն ուղելով. եւ եթէ ազնուականը զայն զրկէր իրեն՝ շատ բարի, սակայն եթէ մերժէր՝ Բարակ անոր վրայ կը յարձակէր գիշերանց, կառնէր գեղուհին եւ ազնուականին բոլոր ստացուածքը եւ ուրիշ բաներ ու զանոնք բռնութեամբ իր երկիրը կը բերէր»:

«Եկուր ինծի հետ իմ բերդս, ըսաւ անոր Իսկ Սնրատ, արդարեւ քու տունդ է եւ ես քու գերիդ: Այս ամէնը հոն անցուր եւ յետոյ դուն կրնաս որոշել»:

«Բարակ դժուարութեան մէջ ինկած եւ յողնած ըլլալով՝ վստահեցաւ Սահլ Իսկ Սնրատի խօսքերուն եւ ըսաւ անոր. Լաւ չէ որ ես ու եղբայրս նոյն վայրին մէջ գտնուինք, որպէսզի եթէ ունէ մէկը մեզմէ մէկուն հանդիպի՝ միւսը դեռ կարենայ ապրիլ: Ես, ինքս, քեզի հետ կը մընամ, եւ Ապտ Ալլահ իմ եղբայրս, կ'երթայ Իսկ Իստիֆանուի, որովհետեւ չենք գիտեր քէ ինչ պիտի պատահի. եւ մենք յաջորդ չունինք որ մեր ընտանիքը պահէ»:

«Քու որդիներդ բազմաթիւ են, պատասխանեց Իսկ Սնրատ: Բայց Բարակ պատասխանեց որ անոնց մէջ հատ մը իսկ չկար որ լաւ ըլլար՝ որով մնաւ ինք որ իր եղբայրը երթար Իսկ Իստիֆանուի

բերդը, որուն ան կը վստահէր: Ասոր վրայ ան գնաց Իսկ Սնրատի ամրոցը եւ առտուն Ապտ Ալլահ գնաց Իսկ Իստիֆանուի բերդը, մինչ Բարակ գնաց Իսկ Սնրատի քով »:

«Իսկ Սնրատ գրեց ալ-Աֆշինի, անոր ըսելով որ Բարակ իր հետն է, իր բերդին մէջ: Ալ-Աֆշին պատասխանեց. Եթէ ասիկա ճիշտ է, վերջնականապէս քեզի համար նպատաւոր պիտի ըլլայ Հաւատացեալներու Հրամանատարին (Աստուած գինքը զօրացնէ) եւ ինծի նկատմամբ. եւ գրեց որ ան (Իսկ Սնրատ) լաւ պիտի վարձաւորուի: Յետոյ ան նկարագրեց Բարակը իր մտերիմներէն մէկուն, որուն վրայ կը վստահէր, եւ զայն զրկեց Իսկ Սնրատի, եւ վերջնոյս գրեց բացատրելով որ իր մը տերիմներէն մին իրեն կը զրկէ՝ որպէսզի Բարակը տեսնէ ու վաւերականացնէ իրեն տրուած տեղեկութիւնը»:

«Իսկ Սնրատ չուզեց որ Բարակի կատարածները արթնան, որով ըսաւ մարդուն. Քեզի համար գայն տեսնել անկարելի է, բացի այն ատենէն երբ ան զբաղած է իր ֆաշով: Ան կը ֆաշէ ինծի հետ եւ երբ կը տեսնես որ մենք նախաճաշ կ'ուզենք՝ հագուուէ խոհարարներուն վերաբերող հագուստով, որոնք մեզի հետ են, որպէսզի մեր բնիկներուն երեւոյթը ունենաւ: Յետոյ եկուր իրր քէ դուն կերակուր կը բերես կամ բան մը կը տանիս, որովհետեւ ան զբաղուած պիտի ըլլայ իր ուտելիքով եւ դուն զինքը ցանկութեանդ համաձայն պիտի քննես. յետոյ դարձիւր եւ տիրոջ տեղեկագրէ »:

«Ըստ այնմ ալ մարդը կատարեց ճաշի ժամանակ. Բարակ զրուխը վերցուց եւ անոր նայեցաւ. բայց չճանչնալով զայն՝ հարցուց. Ո՞վ է այս մարդը»:

«Իսկ Սնրատ պատասխանեց. Խորասանէն մարդ մըն է, քրիստոնեայ մը, որ մեզի կապուած է ժամանակէ մը ի վեր, եւ Ուրսուսանիին հասկցուց թէ ինք ինչ կ'ըսէր »:

«Այն ատեն Բարակ ըսաւ մարդուն. Երբէն ի վեր հոս կը գտնուիս»:

«Այսինչ եւ այսինչ տարիէն ի վեր, պատասխանեց նա»:

«Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն հոս կը մնաս, հարցուց Բարակ»:

«Մարդը պատասխանեց. Հոս ամուսնացած եմ»:

«Դուն շիտակ ըսիր, ըսաւ Բարակ: Երբ մէկը մարդու մը կ'ըսէ՝ Ո՞րքէ կու գաս, ան կը պատասխանէ՝ Անկէ ուրկէ որ կ'իմնու գայ»:

«Մարդը ալ-Աֆշինի վերադարձաւ տեղեկութեամբ եւ նկարագրեց անոր բոլորը ինչ որ հոն տեսած էր Բարակէն: Որուն վրայ ալ-Աֆշին Ապտ Սալիտը եւ Բուզբարահը Իսկ Սնրատի զրկեց, եւ անոնց հետ նամակ մը, եւ հրամայեց որ երբ որոշուած ժամբուն հասնին՝ նամակը զըրկեն Իսկ Սնրատի, բնիկի մը հետ. անոնց սպասարեց նաեւ որ անհնազանդ չըլլան Իսկ Սնրատի, ինչ որ ալ ըլլան անոր յանձնարարութիւնները որոնք իրենց պիտի տայ»:

«Անոնք իրենց յանձնարարութեան պէս կատարեցին. Իսկ Սնրատ իրենց գրեց որ իրեն յիշած մէկ վայրին մէջ մնան, զոր անոնց երկուքին ալ նկարագրեց՝ որպէսզի իր սուրհանդակը զիրենք գտնէ: Անոնք այդ վայրին մէջ սպասեցին, որ իրենց նկարագրած էր. ան՝ անոնց միջեւ եւ պաշար զրկեց մինչեւ որ Բարակ ուղեց որսի երթալ: Իսկ Սնրատ ըսաւ անոր. Հոս հովիտին մէջ օդը հաճելի է եւ դուն տխուր ես այս բերդին խորքին մէջ, որով քոյր որ երթանք, առնելով բազէս եւ անկարագրէս մեզի հետ եւ ամէն բան որ պէտք է: Մենք մեր հոգերը պիտի վանենք մինչեւ ֆաշի ատեն, որսալով»:

«Ինչպէս որ կը ցանկաս, պատասխանեց Բարակ»:

«Իսկ Սնրատ այնպէս կարգադրեց որ երկուքն ալ ձիավարեն առաւօտուն եւ ինք գրեց Ապտ Սալիտի եւ Բուզբարահի, անոնց ըսելով ինչ որ որոշած էր ընել եւ յանձնարարելով իրենց զօրքերով զինք դիմաւորել, լերան մէկ կողմէն՝ մին, եւ միւսն ալ միւս կողմէն: Անոնց հրամայեց պազտի ճամբորդել առաւօտեան աղօթքի

պահուն. այն ատեն երբ իր սուրհանդակը իրեն հասնի՝ անոնք պէտք է բարձրանան հովիտին վրայ, եւ երբ անոնք զիրենք տեսնեն՝ պէտք է որ վար դան եւ զիրենք բռնեն: Երբ իսկ Սնրատ եւ Բաբակ դուրս ձիավարեցին, յաջորդ օրը իսկ Սնրատ սուրհանդակ զրկեց Ապու Սայիտի եւ ուրիշ մըն ալ Բուզարահի եւ իւրաքանչիւր սուրհանդակի ըսաւ. Դուք ասիկա տար այսինչ եւ այսինչ տեղը եւ դուք ալ ասիկա տար այսինչ եւ այսինչ տեղը: Յետոյ մեր վրայ բարձրացէ՛ք եւ երբ երկուքս ալ տեսնէ՛ք՝ Ահաասիկ հոս եմ, բռնեցէ՛ք, ըսէ՛ք: Ան (Իսկ Սնրատ) կ'ուզէր (այս կերպով) շփոթեցնել Բաբակը, որպէսզի կարենայ ըսել. Այս ձիավարները մեր ուղղութեամբ կու գան եւ մեզ պիտի բռնեն: Ասիկա անոր համար՝ որ չէր ուզեր Բաբակը իր բերդէն անոնց յանձնել»:

«Երկու սուրհանդակները եկան Ապու Սայիտի եւ Բուզարահի եւ անոնց հետ բարձրացան մինչեւ որ հովիտին վրայ էին, եւ ահա անոնք Բաբակի եւ իսկ Սնրատի վրայ էին: Վար նայեցան եւ տեսան Բաբակը. յետոյ իրենց մարդոցմով վար իջան, մին՝ մէկ կողմէն, միւսը միւս կողմէն, եւ զանոնք երկուքն ալ բռնեցին իրենց ճնշող կարգէններուն հետ: Բաբակ ըսաւ՝ պիտակ դուռաւ մը հագած էր, սպիտակ փաթիթոց մը եւ կարծ կօշիկներ. եւ տեսան որ իր ձեռքը ունէր ճնշող կարգէ մը: Երբ տեսաւ որ զինուորները զինքը չըջապատած էին, ան կեցաւ եւ նայեցաւ երկուքին. ահոնք ըսին. Իջի՛ր »:

«Ո՞վ է՛ք դուք, հարցուց ան»:

«Անոնցմէ մին պատասխանեց. Ես Ապու Սայիտն եմ, եւ միւսն ալ պատասխանեց. Ես Բուզարահն եմ»:

«Այդպէս թող ըլլայ, պատասխանեց Բաբակ, եւ ոտքը ծռելով ձիէն իջաւ»:

«Իսկ Սնրատ զինքը կը դիտէր. Բաբակ զլուխը վերցուց անոր կողմը եւ յանդիմանեց զինքը, ըսելով. Արդարեւ դուք զիս ծախեցիք Հրեաներուն (Արարներուն տըրուած անարդական անունը — Յ. Գ.) անցնան գումարի մը համար: Եթէ դրամ

կ'ուզէիր, եւ եթէ ինծի հարցնէիր՝ ես քեզի աւելին պիտի տայի ասոնց տալիքէն»:

«Հեծիր եւ ձիավարէ, ըսաւ Ապու Սայիտ »:

«Եւ ան ըսաւ. Թող այդպէս ըլլայ»:

«Եւ անոնք զինքը բերին ալ-Աֆշինի, եւ երբ անոնք ալ-Աֆշինի բանակատեղին մօտեցան, ան Բարդանտ զնաց եւ իր վրանը հոն կանգնեց եւ կարգադրեց որ մարդիկը երկու կարգի վրայ շարուին: Ալ-Աֆշին նստած էր երկձողեան մեծ վրանի մը մէջ՝ երբ անոնք եկան Բաբակի հետ. ան հրամայեց որ թող չտան ոեւէ օտարականի երկու շարքերուն մէջ մտնել՝ վախճալով որ անոնք որոնց բարեկամները Բաբակ սպաննած էր կամ անոնց որոնց մեծ զօրախոռոթիւն պատճառած էր, զուցէ զինքը սպաննեն: Բազմաթիւ կիներ եւ երիտասարդներ արդէն եկած էին ալ-Աֆշինին՝ ըսելով որ Բաբակ զիրենք բռնած էր, եւ թէ իրենք ազատ ծնած անձեր էին, Արար կամ Պարսիկ աղնուականութենէ: Ալ-Աֆշին հրաման տուաւ ասոնց վերաբերմամբ, եւ մեծ շրջափակ մը ցանկապատուեցաւ, ուր զանոնք ստիպեց ապրիլ, եւ բոլորին նմանապէս հաց տուաւ: Յետոյ ապսպրեց անոնց զրել իրենց ազգականներուն, ուր որ ալ ըլլային անոնք. եւ ով որ գայ եւ ճանչնայ կին մը կամ մանչ մը կամ աղջիկ մը եւ երկու վկաներով հաստատէ թէ կը ճանչնայ զանոնք կամ թէ անոնք իր ընտանեաց կիներ էին կամ ազգականներ, ան (ալ-Աֆշին) զանոնք անոր պիտի յանձնէ: Մարդիկ եկան եւ տարին բազմաթիւ անձեր, բայց չատեր դեռ մնացին սպասելով իրենց ազգականներուն որ գան»:

«Այն օրը երբ ալ-Աֆշին հրամայեց մարդոց շարքեր կազմել՝ կէս մղոն մը կ'երկարէր իր եւ Բաբակի միջեւ. որով վերջինս պարտադրուեցաւ ձիէն իջնել եւ քաշել շարքերուն մէջէն, իր դուռաւն, փաթիթոցը եւ կօշիկները հագած, մինչեւ որ կանգնեցաւ ալ-Աֆշինի առջեւ: Ալ-Աֆշին զինքը դիտեց, յետոյ ըսաւ. Զինքը բանակատեղ տարէ՛ք, եւ այսպէս անոնք ուղղուեցան վար իրենց հետ: Բայց երբ

կիները եւ երիտասարդները շրջափակին մէջէն տեսան զինքը՝ իրենց երեսները ծածեցին եւ աղաղակեցին եւ լացին, այնպէս որ իրենց ձայները օդը լեցուցին»:

«Ալ-Աֆշին ըսաւ անոնց. Երեկ գիշեր դուք ողբացիք՝ Ան մեզ կալանաւորեց. եւ այսօր դուք իրեն համար կու լաք: Աստուած ձեզ անիծէ»:

«Սակայն անոնք ըսին. Ան մեզի հետ լաւ էր »:

«Ասոր վրայ ալ-Աֆշին հրամայեց եւ Բաբակ տուն մը տարուեցաւ եւ յանձնուեցաւ ալ-Աֆշինի մարդոց հսկողութեան»:

«Ապու Ալլահ, Բաբակի եղբայրը, երբ Բաբակ իսկ Սնրատի հետ էր, զնաց (ամբողջը) Իսա իսկ Երեսօֆ իսկ Իստիֆարոցը: Ալ-Աֆշին Բաբակին ձեռքակալութենէն եւ իր բանակատեղը բերուելէն վերջ, երբ գայն հսկողութեան տակ դրաւ, իրեն (ալ-Աֆշինի) տեղեկացուեցաւ Ապու Ալլահին ուր գտնուելը, թէ ան արդարեւ իսկ Իստիֆանուսի հետ էր: Ըստ այսմ զըրեց առ իսկ Իստիֆանուս՝ Ապու Ալլահը իրեն զրկել. եւ ասիկա կատարուեցաւ: Երբ ալ-Աֆշինի ձեռքը հասաւ ան՝ գայն երբ ալ-Աֆշինի ձեռքը հետ նոյն տան մէջ եւ մարդիկ դրաւ անոնց վրայ հսկելու, եւ զրեց առ ալ-Մուսաղիմ՝ Բաբակն ու անոր եղբայրը կալանաւորելն. եւ ալ-Մուսաղիմ յանձնարարեց զանոնք երկուքն ալ իրեն բերել: Երբ կը պատրաստուէր իրաւ գառնալու՝ Բաբակը կանչեց եւ ըսաւ. Իրապէս ես մտադրած եմ քեզի հետ փախալ իրապէս եւ մտադրած եմ քեզի հետ փախալ իրապէս, որով վերջին անգամ մը մայր Ատրպատականի մէջ ինչ քանի վրայ որ կ'ուզես»:

«Բաբակ պատասխանեց. Կը ցանկամ իմ փախալ տեսնել»:

«Որուն վրայ, լուսնկայ գիշեր մը ալ-Աֆշին անոր հետ մարդիկ զրկեց ալ-Բադդ եւ ան (Բաբակ) շրջեցաւ անոր մէջ եւ նստեցաւ սպանուածներուն եւ տուններուն վրայ մինչեւ առաւօտ, յետոյ ալ-Աֆշինի մօտ դարձաւ»:

«Ալ-Աֆշին գայն դրած էր իր մարդոց»:

մէ մէկուն հսկողութեան տակ. սակայն Բաբակ ցանկացաւ ազատիլ այդ մարդէն եւ ալ-Աֆշին ըսաւ անոր. Ինչո՞ւ կ'ուզես ազատիլ անկէ»:

«Ան կու գայ ձեռքերուն վրայ մտնել հոտով, պատասխանեց Բաբակ, յետոյ ան կը ննջէ իմ գլխուս մօտ եւ իր շունը գանձի է ինծի: Որով ալ-Աֆշին հեռացուց մարդը»:

«Բաբակ ալ-Աֆշինի եկաւ ի Բարդանդ, Շաւալի 10ին (Սեպտեմբեր 15, 837), Բուզարահի եւ Դիուզադի (Ապու Սաճ) միջեւ»:

Տարարի մեղ հետաքրքրող այս նիւթին կարեւոր մասը հոս կ'աւարտի: Կաւելցնէ որ երբ Բաբակ իստիֆարոցն ուղեցաւ՝ վերջինս կտրել տուաւ անոր ոտքերն ու ձեռքերը, յետոյ պատուել ու կըտրել տուաւ անոր ստամոքսը, հուսկ Բաբակի գլուխը կտրել տալով՝ իրաւասան զըրեց. իսկ մարմնակոծող ցիցի զարնել տուաւ Սամաուայի ալ-Աբաբայ բլուրին ծառատանին մէջ: Նոյնը վիճակուեցաւ նաեւ Բաբակի Ապու Ալլահ եղբոր՝ Պաղտատի մէջ, ուր զլիսատուեցաւ եւ յետոյ խաչուեցաւ:



Տարարիէն իրր թէ թարգմանաբար ներկայացուցած է Բաբակի այս մասը հայերէն՝ Բադրատ իստիֆանց, իր Արաբացի Մատենագիրներ Հայաստանի մասին շարքին մէջ (Վիեննա, 1919), էջ 95-96, չատ համաձայն եւ ոչ հարադատ:



Հոս նախ ներկայացնենք զլիսաւոր դեղակատարները եւ իրենց ինքնուրոյնը հաստատենք:

1. - ԲԱԲԱԿ

Բաբակի մասին կը յիշեն մեր պատմիչները: Նախ խօսք տանք Վարդան վարդապետի, որ կը գրէ. «Յաւուրսն յայնոսիկ

Ռուստոմայ անփոխ արարեալ զարտուէրն
Բաբանայ՝ եւ տալ պատերազմ ընդ ամրա-
ցելոցն ի բերդին: Յայնժամ ապաւինեալ
բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի, ըզ-
խաչս եւ զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝
ի հարուածս սաստիկս հարկանէին զպարս-
կական զուռն, եւ զերծեալ յայնմանէ
զՔրիստոս փառաւորէին զոհանալով զնը-
մանէ»⁽⁶⁾:

Նման մանրամասնութիւն կու տայ նաեւ
Ստեփաննոս Օրբէլեան. «Ի ընդ 176 թը-
ւականին Հայոց (պէտք է ըլլայ 276: Յ.
Ք. 827) ելանէ անիծեալ եւ աշխարհա-
ւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի
Հայս. եւ իբրեւ հուր սաստիկ այրեաց եւ
հրդեհեաց զբերդեցիկութիւն աշխարհիս, ո-
րոյ անուն իսկ Աւարանչան ճանաչուր: Եւ
բազում աւարան եկեալ ի Սիւնիս՝ ամրա-
նայ ի բերդադիւղն Շաղատու. եւ կամէր
զայն եւս ապականել զբերդեցիկ աշխարհն
Սիւնեաց Տէր եւ իշխանաց իշխեցող, զնայ
փութանակի եւ ամէ գիւրջան պարսիկ
բազում զօրու յԱտրպատականէ, եւ հար
զՄրվան սաստկապէս, եւ փախստական ա-
րար. բայց ինքն Վասակ ի նմին ամի վախ-
ճանի»:

«Եւ նոյնժամայն առնու Բաբան ըզ-
դուարն նորա ի կնութիւն իւր. եւ առ-
նէր ընդ ձեռամբ զգաւառն: ... Յետ այսր
անհնազանդ եղեւ գաւառն Բաղասականայ
հրամանի եւ օրինաց Բաբանայ, որոյ ե-
կեալ ձեռնադրութեամբ Աբլ-Ասադայ Աղ-
վանեցոյ, կոտորեաց սաստիկ եւ անո-
ղորմ զգաւառն Բաղասականայ, եւ մաշ-
եաց մինչեւ ի կանայս եւ մատաղ մանկը-
տիս. որք վասն անմեղ խողխողմանցն
պսակելոց են ի Քրիստոսէ»:

«Իսկ ի գալ ամին զնաց Բաբան ի դա-
ւառն Գեղարքունւոյ եւ հարկ ի սուր սու-
սերի զքնակիչան ոգիս իբրեւ 15.000, եւ
զյոզնապայծառ մենարանն եւ հռչակելի
ուխտն Մաքենոցաց յաւարի առեալ՝ դա-

մենայն ստացուածն այրեաց եւ քանդեաց
զամենայն շինուածն. բայց կրօնաւորքն
նախնայեց եղեալ եւ յերկուս բաժանեալ՝
զնացին»: Օրբէլեան՝ Բաբակի մասին
այսքան կը գրէ⁽⁷⁾: Ոչ մէկ վկայութիւն
անոր վախճանին մասին:

Կաղանկատուացի եւ Օրբէլեան երկուքն
ալ կը վկայեն Բաբակի Հայաստան ինչ-
պէս մտնելուն մասին, թէ եւ թուականի
անհամաձայնութեամբ: Դէպքերը կը սկը-
սին 821էն վերջ եւ 827էն առաջ: Մահմե-
տական ասպատակութիւն մը, զլիսաւորու-
թեամբ Սեւադայի աշխարհաւերն Տաճիկ,
որոյ Աւարանչան անուն քանաչիւր (Կա-
ղանկատուացի), կամ աշխարհաւերն Մըր-
վան բազում զօրօք Տաճկաց... որոյ ա-
նուն իսկ Աւարանչան քանաչիւր (Օրբէլ-
եան, ցոյց տալով որ վերջինս օգտուած է
առաջինէն: Յ. Ք.) կ'արշաւէ ի սահմանս
Հայոց (Կաղանկատուացի) եւ մեծ աւա-
րաւ կու գայ Սիւնիք եւ ամրանայ ի բեր-
դատեղի աւանին Շաղատու, որ է ի գա-
ւառին Մոկաց (Կաղանկատուացի), կամ
ամրանայ ի բերդադիւղն Շաղատու... ի
գաւառին Մոկաց (Օրբէլեան): Սեւադայ
Մրվան Աւարանչան հոն կը կեդրոնացնէ
իր ոյժերը, անկէ Սիւնիքն ալ աւարի եւ
աւերի մատնելու համար:

Այն ատեն Սիւնեաց տէրն էր Վասակ
Սիւնի (Տէր եւ իշխանաց իշխեցող՝ ըստ
Օրբէլեանի) որ գնաց փութանակի եւ ամէ
գիւրջան պարսիկ բազում զօրու յԱտրպա-
տականէ (Օրբէլեան), կամ ամեալ գիւ-
րան ի Պարսից (Կաղանկատուացի): Ու-
րեմն Վասակ Սիւնի կը դիմէ Բաբակին օգ-
նութեան՝ Մրվանայ դէմ, եւ ասիկա կ'ըլ-
լայ Բաբակի առաջին մուտքը Սիւնիք եւ
Հայոց Աշխարհ:

Վասակ Սիւնի կը դիմէր Բաբակի, հա-
ւանաբար ծանօթ ըլլալով անոր հակա-
արար եւ հակա-մահմետական կոչմանը
որոնք անշուշտ սկսած ըլլալու էին դեռ
817 թուականէն: Բաբակ անմիջապէս
կը պատասխանէ Վասակ Սիւնիի կոչին եւ

միասին կը յարձակին Մոկաց գաւառի Շա-
ղատու բերդին մէջ ամրացած Մրվանի ա-
պատակ Տաճիկներուն վրայ, եւ ետք ըզ-
նուս եւ արար փախստական (Կաղանկա-
տուացի), կամ ետք զՄրվան սաստկա-
պէս, եւ փախստական արար (Օրբէլեան):

Վասակ Սիւնի իր շինակից Բաբակի հետ
ձեռք բերած այս յաղթանակէն վերջ՝ կը
մեռնի, կամ ինչպէս մեր այս երկու պատ-
միչներն ալ կը կրկնեն, Վասակ Սիւնեաց
տէրը ի նմին ամի վախճանի կամ վախճա-
նեցաւ:

Դեռ հաղթ Վասակ մեռած էր, երբ Բա-
բակ զղուարթն նորա (Վասակ Սիւնիի) ի
կնուրթիւն իւր կ'առնէ: Ըստ երեւոյթի, այս
ամուսնութիւնը խոտելի է նկատուելու, նը-
կատի առնելով Բաբակի իսլամատեաց ա-
ղանդաւոր հանգամանքը: Եթէ Բաբակ իւր
զանգաւոր ֆանդուկներն բանեցուցած էր այս ա-
ւել թուական համար, մենք ատոր մասին
մտնելու թեան համար կը հանդիպինք մեր
պատմիչներուն քով: Մական Օրբէլեան
կը վկայէ որ Բաբակ՝ կ'երեւի իբր ժա-
ռանդութիւն՝ ամուսնանալէն վերջ առնէր
ընդ ձեռամբ զգաւառն (Սիւնեաց):

Երկար չի տևեր, եւ Բաղասականայ
գաւառը կ'ըմբոստանայ Բաբակի դէմ:
Մեր երկու պատմիչներն ալ նոյն բերնով
կը վկայեն որ անհնազանդ եղեւ գաւառն
Բաղասականայ հրամանի եւ օրինաց Բա-
բանայ (ըստ Կաղանկատուացիի՝ ՅԱՆՕ-
բանայ): Բաբակ ել ի Պարսից եւ
էտաւ աւերեաց գերկիւրն եւ ի սուր սուսերի
էարկ գկանայս եւ գնանկուս Բաղաց (Կա-
ղանկատուացի):

Օրբէլեան սակայն կու տայ ուրիշ ման-
րամասնութիւն մը հոս: Բաբակ կու գայ
սպաստամբութիւնը զսպելու՝ եկեալ ձեռն-
տուութեամբ Աբլ-Ասադայ Աղվանեցոյ,
կոտորեաց սաստիկ եւ անողորմ զգաւառն
Բաղասականայ. եւ մաշեաց մինչեւ ի կա-
նայս եւ մատաղ մանկիս:

Բաղասական կամ Բաղաց գաւառ
(Բաղք) կը գտնուէր Սիւնեաց նահանգին
հարաւային կողմը: Եղած է ժամանակ՝
որ այդ սահմաններուն մէջ կը հաշուուէր

43 բերդեր, 1500էն աւելի զիւղեր (48
վանքերով): Սահմանակից էր Մոկաց գա-
ւառին:

Բաբակ ետ կը դառնայ՝ Սիւնեաց ա-
ղքստամբութիւնը ձգմելու համար: Այս
անգամ Բաբակին կը զինակցէր Օրբէլեանի
Աբլ-Ասադ Աղվանեցի կոչուած հայ իշ-
խանը, այլուստ ծանօթ՝ իբր Եսայի Ա-
ղոմոսէ, եւ արար պատմիչներուն Իսա-
բին Երեսուք բին Իսթիֆանուս: Իր մասին
իր կարգին կարելի եղած մանրամասնու-
թեամբ պիտի խօսինք յետոյ:

Բաղաց գաւառը Բաբակի կողմէ սուր
սուրբի մաշուելէ յետոյ, յաջորդ տարին
Բաբակ կ'արշաւէ Գեղարքունի: Եւ անտի
(Բաղասականէն) ի միւս տարին Էանց Բա-
բան ի գաւառն Գեղարքունի եւ Էարկ ի
սուր զրնակիչսն ոգիս իբրեւ տասն եւ հինգ
հազարս, եւ զմեծ Մաքենացոց մայրաքա-
ղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ
այլ ոչ ինչ. եւ էր թիւն Հայոց երկու հա-
րիւր եօթանասուն եւ վեց (Կաղանկատ-
ուացի): Հայոց 276ը հաւասար է 827ին,
որ թուականն է Բաբակի Գեղարքունիք
աւերելուն: Ուրեմն Բաղաց գաւառի աւե-
րումը կ'իյնայ 826ին:

Օրբէլեան կը կրկնէ Կաղանկատուացիի
վկայութիւնը: Կ'աւելցնէ որ Մաքենացոց
հռչակաւոր ուխտը, որուն Մաքենացոց
մայրաքաղաք կոչուած կու տայ Կաղան-
կատուացի՝ հաւանաբար կեդրոնական մե-
նաստան մը ըլլալուն համար, Բաբակէ կը
մատնուի կրակի եւ կողոպուտի: Բարե-
բախտաբար վանականները նախնաց ե-
ղեալ՝ երկու խումբով կը փախչին եւ կ'ա-
պատին սրածութենէ:

Բաբակ՝ Գեղարքունիքը աւերելէ վերջ՝
յետ երկու ամաց, այսինքն 829ին, ըստ
Կաղանկատուացիի, կը պատերազմի ընդ-
դէմ Տաւուսիին, որ խալիֆայական բա-
նակով մը Բաբակի դէմ ելած էր: Տաւուս
կը պարտուի եւ իր 150.000ոց բանակը կը
հալածուի Բաբակէն: Դարձեալ նոյն
պատմիչին համաձայն՝ ի միւսում տարին
Բաբակ պարտութեան կը մատնէ, 830ին,

(6) Թիֆլիս, 1913, էջ 374-377:

(7) Թիֆլիս, 1911, էջ 158-9:



Արքայի գործիքն ընդհանուր առաջ հրամանատարը⁽⁸⁾ :

Նոյն այս 830 տարին, կ'երեւի թէ Բաբակ Աբրահամի հետ զբաղած ըլլալուն պատճառով՝ Սիւնեաց մէջ դարձեալ կ'ապրտամբին Բաբակի դէմ: Կաղանկատուացի որ միակ աղբիւրն է այս ապստամբութեան պատմութեան, կը գրէ. ի նմին ամի (830) դաւանանդին ի սէր եւ ի խաղաղութիւն, որոց անուանք Գաւուս եւ Շապուհ անապիւր, սպանին զՍտեփաննոս ըզկոչեցեալն Արլասադ, որ էաձն գրաբան եւ եհար գրադաշխն:

Կաղանկատուացիի վկայութենէն պէտք է հետեւցնել որ Բաբակ Գեղարքունիքը 827ին աւերելէ վերջ՝ խաղաղութիւն կ'ընթացէր Սիւնեաց իշխանաւորներուն հետ: Այս խաղաղութիւնը տեւած է մինչեւ 830, երբ Բաբակ ստիպուած էր ճակատիլ Աբրահամի բանակին դէմ: Ասիկա յարմար առիթ նկատելով՝ երկու առաջնորդները, որոնք Դաւոն եւ Շապուհ կը կոչուէին, դարձեալ կ'ապստամբին: Դաւոնի եւ Շապուհի ինքնութիւնը որոշ է: Դաւոն կըրնայ Դաւիթի տեղական մէկ ձեւը ըլլալ: Շապուհ գործածական էր թէ՛ Հայոց եւ թէ՛ Պարսից: Հաւանական է որ երկուքն ալ հայեր ըլլային: Ասոր ապացոյց է Կաղանկատուացիի վկայութեան այն մասը, վերջին մասը, որ յառաջ բերինք բաւական վերը: Հոս մենք դարձեալ նկատի պիտի առնենք այդ հատուածը իր կարգին:

Բաբակի դէմ ապստամբները, որոնք կը դաւաճանէին սիրոյ եւ խաղաղութեան, նախ կը սպաննէին Արլասադ Ստեփաննոսեանը, որ էաձն գրաբան եւ եհար գրադա-

շխն, 826ին: Աբր-Ասադ՝ Բաբակի հետ Բաղաց, Գեղարքունեաց եւ Սիւնեաց ուրիշ մասեր նուաճելէ վերջ՝ անտարակոյս Բաբակէ այդ Սիւնեաց մասերուն կառավարիչ նշանակուած էր: Ահա ապստամբները, առաջին առթիւ՝ Բաբակի աջակից եւ անոր կառավարիչը կը սպաննէին, անշուշտ նախ իբր վրէժխնդրութիւն Բաղաց, Գեղարքունեաց աւերումին: Յետոյ իբր Բաբակի կառավարիչ:

Դաւոն եւ Շապուհ հաւանաբար բոլոր Սիւնիքը իրենց ապստամբութեան կողմնակից չունէին, որովհետեւ անոնք նախ ճաշակած էին Բաբակի խստութիւնը. երկրորդ՝ Բաբակ իր զօրութեան բարձր կէտին վրայ կը գտնուէր դեռ այն ատեն: Անտարակոյս Բաբակ իրեն հաւատարիմ եւ գործակից Սիւնեցի հայ իշխաններու, որոնցմէ էր Աբր-Ասադ, տուած էր նաեւ իր ազանդաւորներէն պահակազօրքեր:

Սիւնեցի ապստամբները Աբր-Ասադը սպաննելէ վերջ՝ ամրացան ի բերդն Գորգու, կալեալ զգաւառսն ամս տասն եւ երկու, որք եմ այստֆիկ՝ վերին վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պաղկանի, Միսանի, եւ Տրի գաւառ (Կաղանկատուացի):

Պատմիչին տուած ամս տասն եւ երկուսն սխալ կը թուի: Հաւանաբար ԱՄԻՍՍՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒՍ քաղաքներն է, որովհետեւ պատմիչը անմիջապէս կը կցէ. Յետ այնորիկ գաղափարսն Արլասադայ կալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին: Այսպէս ուրեմն Աբր-Ասադի սպանողները, Դաւոն եւ Շապուհ, կը բռնուին Աբր-Ասադի մերձաւորներէն եւ իրենց կարգին կը

գորդին ընդհանուր առաջ հրամանատարը⁽⁸⁾ : Իսկապէս իսկն ալ-Լայոն է: Ասոնցմէ զատ Բաբակ պարտութեան մատնեց Եւսեա իսկն Մուսատ, Իսա իսկն Մուհամատ իսկն Արի իսկն եւ Ահմադ իսկն ալ-Ճուսայիդ, որ գերբ ընեց, Զուրայիկ իսկն Ալի իսկն Սադակա, որ ալ Մամուհէ Հայաստանի կառավարիչ նշանակուած էր:

Բաբակ իր պատերազմներու ընթացքին 255.500 հոգի սպաննեց, ըստ Տարբիւի:

սպաննուին: Սակայն ապստամբութիւնը Բաբակի դէմ՝ կը շարունակուի: Կաղանկատուացի կը վկայէ որ եւ ի նոյն ամի (830) էանց Բաբան զգետովն Երասխ ի Պարսից, եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ: Բաբակ որ յաղթեց Աբրահամի բանակին, Ամարաս եկաւ՝ անցնելով Երասխը: Ամարաս՝ Արցախի վարանդայ գաւառին մէջ չէն մըն էր այն ատեն: Մուղանի դաշտին մէջ գտնուող այս վայրը ընտիր տեղ մըն էր Բաբակի բանակին համար՝ ձմեռելու:

Բաբակ զգալով որ Պաղտատի իշխիՖաները պիտի շարունակեն իրենց կռիւը իր դէմ՝ մինչեւ որ մէկնումէկը վերջնականապէս պարտուի, կ'երեւի թէ չուզեց Սիւնեաց ապստամբութիւնը աւելի արծարծել, եւ ցանկացաւ իր թիկունքը ապահովել՝ հայ իշխաններուն հետ համաձայնութեան դալով: Ուստի ըստ պատմիչին, բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի ի հնազանդութիւն մտա կեցեցին (ապստամբ հայ իշխանները: Յ. Ք.), եւ ժամագիւտ զղջումը ունեց հնազանդեցան: Բաբակ նոյնիսկ իր խաղաղասիրական ձեռնարկին մէջ կը յաջողի: Սիւնեցի իշխաններէն ումանք առժամեայ տեղի կու տան, սակայն յետոյ դաւեալք անհնազանդ եղին, եւ շարունակեցին իրենց ապստամբութիւնը:

Պատմիչը կը շարունակէ ըսելով որ անտի (Ամարասէն) դարձեալ Բաբանայ յերկիր իւր ի Պարսս յԱտրպատական: Պատմիչին վկայութենէն այնպէս պէտք է հետեւցնել որ Բաբակ Մուղանի (Ամարասի) մէջ ձմեռելէ վերջ՝ դարնան կ'անցնի Պարսից Ատրպատական: Պէտք է խորհիլ որ ան Սիւնեցի հայ իշխաններուն ումանց ժամանակաւոր տեղի տալէն քաջալերուած՝ կը յուսար որ միւսներն ալ տեղի կու տան եւ Սիւնիք դարձեալ կը խաղաղի: Խաղաղասիրական իր այս գործը շարունակելու համար Բաբակ իր տեղը եթող զօրավար ունի Ռոստոմ հանդերձ գործ, եւ ետ մտա հրաման ոչ պատերազմի ընդ բերդին (այսինքն Գորգու, ուր կեդրոնացած էին ապստամբները), այլ ի սէր համակել, զի հնազանդեցին: Ասիկա այլեւս

ոչ մէկ կասկած կը թողու որ իմ հետեւութիւնս, որ քիչ վերը ըրի, ճիշտ էր:

Ռոստոմ, հաւանաբար Բաբակի ազանդաւորներէն Պարսիկ հրամանատար մը, չի հետեւիր Բաբակի յանձնարարութեան: Պատմիչը կը շարունակէ. իսկ Ռոստոմայ անփոյթ արարեալ գաղափարն Բաբանայ՝ ել տալ պատերազմ ընդ ամրացեալ ի բերդին: Յայնժամ ապաւինեալ բերդացեացն ի գործիւնն Քրիստոսի՝ զխաչս եւ զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդըն, եւ գերեալ յայնմանէ գրիստոս փառաւորէին գոհանալով զմահէն:

Կաղանկատուացիի վկայութեան այս մասը նախ եւ առաջ կը հաստատէ որ Դաւոն եւ Շապուհ, որ ապստամբութիւնը սկսան՝ հայեր ըլլալու էին, որոնց սկսած ապստամբութիւնը շարունակող այս գործակիցներն էին որ զօրութեամբ Քրիստոսի, խաչով եւ նշխարով պարակական գունդը կը հարուածէին, այսինքն Բաբակի իր տեղ թողուցած Ռոստոմ պարսիկին բանաւ կը կը հարուածէին, պարտութեան կը մատնէին:

Բաբակի յանձնարարութեան դէմ Ռոստոմի ըրած այս սխալ քայլը պատճառ եւ դաժ է անշուշտ որ Բաբակի հրաւերին անսացող Սիւնեցի հայ իշխանները դարձեալ միանան ապստամբական շարժումին: Սիւնեաց այս ապստամբութիւնը ուրեմն յաջողութիւն կը գտնէ 831ին, որքան որ կրնանք հաշուել մեր պատմիչին տուած ժամանակագրութենէն:

Բաբակ առկէ վերջ կ'երեւի թէ ձեռքը կը քաշէ Սիւնիքէն: Ան հետզհետէ կեանքի եւ մահու պայքարի մէջ է Պաղտատի իշխիՖայութեան հետ:



Այժմ դարձեալ Տարբիւն է որ կը պատմէ:

Հարուն ալ-Ռաշիդ իշխիՖային որդին՝ ալ-Մամուն, որ երկար ատեն կուռեցաւ

(8) Հոս աւելորդ էմ նկատել ճշտել ինքնութիւնը յիշեալ Աբրահամի բանակներու հրամանատարներուն:

Կաղանկատուացիի Տաւուսիքը՝ Մուհամատ իսկն Հիւսթայիտ ալ-Տուսին է, որ ալ-Մամունի հրամանատարներէն մէկն էր եւ որ պատերազմեցաւ Բաբակի դէմ 829-30ին: Բաբակի զայն պարտութեան մատնեց եւ սպաննեց:

Դարձեալ Կաղանկատուացիի յիշած Աբրահիմ

Բաբակի դէմ՝ կը մեռնի, եւ իր տեղ խալիֆա կ'ըլլայ իր եղբայրը՝ ալ-Մուստազիմ, 833ի Օգոստոս 10ին:

Այս ալ-Մուստազիմ խալիֆան կը կոչուէր Ապու Իսհակ, եւ այս անուամբ ծանօթ էր վարդան պատմիչին, որ կը գրէ. «Մեռաւ Մամուն, եւ առ զիշխանութիւնն Արուստանակ եղբայր նորա» (էջ 79):

Ալ-Մուստազիմ հազիւ 835ին կրցաւ իր ուշադրութիւնը դարձնել Բաբակի վրայ: Տարբեր կը գրէ որ այդ տարի՝ ալ-Մուստազիմ Բաբակի դէմ զրկուած բանակին հրամանատար նշանակեց ալ-Աֆշին Հայտար իպն Գաուս, մեր պատմիչներուն Աֆշինը, որ 835ի Յունիս 3ին Պաղատտի մօտ բանակեցաւ, անկէ դէպի Բարդանդ ճամբայ ելլելու համար: Բարդանդ՝ Թաւրիզէն հիւսիս-արեւելք՝ Ատրպատականի մէջ կը գտնուէր, Արդէբիլէն 14 փարսան հիւսիս: Բաբակ այդ կողմերը կը գտնուէր 817էն ի վեր, եւ կեդրոն ընտրած է ալ-Բադ քաղաքը, որուն գաւառը Ատրպատականի եւ Արանի (Աղուանք) մէջ կը գտնուէր, սահմանակից Արաքս գետին: Ալ-Մուստազիմ, իր գահակալութեան ըսկիզբն իսկ, Արդէբիլ զրկած էր Ապու Սալիմ Մուհամադ իպն ալ-Եուսուֆը, որ Բաբակէն քանդուած ամբողջութեամբ, Արդէբիլի եւ Զանճանի միջեւ, վերստին կառուցուին եւ ճամբան պահակ դրուի: Ապու Սալիմ, ինչպէս նաեւ ուրիշ արար հրամանատար մը՝ Մուհամադ իպն ալ-Բալիտ, ըստ Տարբերի, նախնական յաջողութիւններ ունեցան Բաբակի այս ու այն հրամանատարներուն դէմ, թէեւ Եսպուլի համաձայն չէ Տարբերի:

Երբ ալ-Աֆշին Բարդանդ հասաւ, Բաբակի դեռ խոշոր սպանալիք մըն էր խալիֆայական տիրակալութեան այս կողմերը: Երկիրը անհանգիստ, ճամբաները պիտանդաւոր, ապահովութիւնը անդոյ: 835ին ալ-Աֆշինի եւ Բաբակի միջեւ ընդհարում մը տեղի ունեցաւ: Տարբերի համաձայն, Բաբակ պարտուեցաւ եւ 1000ի չափ սպաննուած տարէ վերջ՝ Մուղան ապստանեցաւ, հաւանաբար դարձեալ Ա-

մարաս: Նոյն տարին ալ-Մուստազիմ օդ-նական ոյժ զրկեց եւ բանակին համար՝ դրամ՝ ալ-Աֆշինի թուրք հրամանատար Բուղա ալ-Գարիբի (Երէց) հետ:

Վերջապէս երկար և զաւ մարտնչումը ալ-Աֆշինի եւ Բաբակի միջեւ: Մենք հոս չենք ուզեր Տարբերի տուած երկար մանրամասնութեանց արձագանգ ըլլալ: Վերջապէս յուսահատ դիմադրութենէ մը վերջ՝ Բաբակ կը պարտուի, իր հետեւորդներուն բանակը կը ջարդուի ու կը ցրուի, եւ ինք մաղապուրծ կ'ըլլայ, եւ ինչպէս որ Տարբերի իմ տուած թարգմանութեան սկիզբի մասին մէջ տեսանք, Բաբակ իր երկու եղբայրներուն՝ Ապու Ալ-լահի եւ Մուսափիայի, իր մօր եւ մէկ կնոջ իբնա ալ-Քալանդանիայի հետ Հայաստան (Սիւնիք) կ'ուղէ ապաստանիլ եւ այդ ուղ-ղութեամբ ճամբայ կ'ելլէ, հաւանաբար անկէ ալ Բիւզանդիոն ապաստանելու համար:

Իպն խալիֆուն Բաբակի հետ փախչող կնոջ մասին չի խօսիր: Ոչ ալ Տարբերի տուած անունը մեզ կը լուսարանէ թէ Բաբակի կիներէն ո՞րն է որ այս պատիւին կ'արժանանար: Կարելի է խորհիլ որ այս իբնա ալ-Քալանդանիան ըլլար նոյնիսկ Վառակ Սիւնիի աղջիկը, որուն հետ ամուսնացաւ Բաբակ, որ կրնար Սիւնիքի մէջ իր ամուսնոյն փրկութեան օժանդակ ըլլալ:

Մենք տեսանք որ Բաբակ եւ իր եղբայրները, մայրը եւ կիներ, իրենց հետեւորդներով կը նշմարուին Ապու Սաճ արար հրամանատարին նմարդոյմէն: Ալ-Աֆշին զգալով որ Բաբակ պարտութեան պարագային փախչելու միակ ճամբայ մը ունի Սիւնիքի վրայով, հրամայած էր բոլոր ճամբաներուն վրայ հսկել: Ապու Սաճի ոյժերը կը յարձակին հանգչելու համար պահ մը կանգ առած Բաբակի եւ հետեւորդներուն վրայ, կը կալանաւորեն Բաբակի եղբայրը՝ Մուսափիան, մայրը եւ վիներ: Բաբակ իր Ապու Ալլահ եղբոր հետ, եւ հաւանաբար քանի մը ուրիշ հետեւորդներով, կը յաջողին փախչիլ եւ Սիւնեաց

աշխարհի լեռները ապաստանիլ եւ կը ջանան զաղտնի ճամբաներով յառաջանալ: Հաւանաբար ինք ու եղբայրը անջատ թէ-եւ իրարու մօտ՝ կը ճամբորդէին: Ուտեստի պակասը կը ստիպէ որ Բաբակ հայ արօտավայրեր դիմէ՝ հաց գնելու համար: Սակայն հայ հողագործները կը կասկածին եւ լուր կու տան իրենց Սահլ իպն Մնբատ իշխանին: Սահլ կու դայ եւ արդէն իրեն նախապէս ծանօթ Բաբակը կը ճանչնայ:

Երբ Բաբակ կրցաւ ճողոպրիլ Ապու Սաճէն, կ'երեւի թէ ալ-Աֆշին լուր զրկեց Սիւնեաց հայ իշխաններուն, որ հսկեն իրենց սահմաններուն վրայ, ու ձերբակալեն Բաբակը: Սիւստ հետաքրքրական է Տարբերի տուած մանրամասնութիւնները Բաբակի հայ Սահլ իպն Մնբատէ ձերբակալուելու մասին: Պատմիչ Մասուտի սահայն կը տարբերի իր տուած մանրամասնութեանց մէջ: Ան կը յիշէ հերկողի տեղ՝ հովիւ մը, եւ չի յիշեր ո՞չ հերկողին եւ ո՞չ ալ Բաբակին հետ ոեւէ ընկերացող: Իսկ պատմիչ Իպն Կեդիր կ'աւելցնէ, որ Սահլ իպն Մնբատ՝ խալիֆային տեղակալներէն պաշտպանութիւն խնդրած էր Բաբակի դէմ:

Սահլ իպն Մնբատ համոզել կը ջանայ Բաբակը, որ իր բերդը դայ: Ասիկա չահեկան է: Ուրեմն Բաբակ միտակ գերի մը եւ առ առաւելն միայն իր եղբոր հետ չէր որ այդ կողմերը հասած էր: Անանուն արար պատմիչի մը մէկ հատուածը, որու համաձայն՝ հողագործ հայուն ընկերը հայ պահակներուն կը տեղեկացնէ իր տեսածը, կը վկայէ որ պահուած ՄԱՐԳԻԿ կային որոնք ճամբաները բռնած էին:

Սահլ իպն Մնբատ, որու մասին մանրամասն իր կարգին, աղգական էր Աբլ-Ասադին, որ իր կարգին զինակից էր Բաբակին՝ Բաղաց եւ Գեղարքունեաց աւերման եւ ջարդին ժամանակ: Բաբակ որ դեռ կը կասկածէր ըստ երեւոյթի Սահլ իպն Մնբատէն, տեղի կու տայ. սակայն պայման կը դնէ որ իր եղբայրը՝ Ապու Ալլահը՝ ապաստանի Իպն Խալիֆանուսի բերդը, իսկ ինքը կը մնայ Սահլ իպն Մնբատի քով:

Այս Իպն Խալիֆանուսը ամուսնացեր էր Աբլ-Ասադի աղջկան եւ յաջորդն էր: Բաբակ ուզեց այս բաժանումը՝ որպէսզի երբ ինք բռնուի, այն աստեղ իր եղբայրը չարունակէ իր տունը, եւ կամ հակառակը:

Որոշ է որ Բաբակ՝ Սահլ իպն Մնբատէ կը կասկածէր: Ասոր պատճառը կարելի է գտնել Մակդիսի արար պատմիչին քով, որ խօսելով այս դէպքերուն մասին կը վրկայէ որ Սահլ կալանաւորուած էր Բաբակէն եւ վերջինս պղծած էր իր (Սահլի) մայրը, քոյրը եւ կիներ՝ Սահլի ներկայութեան: Ուրեմն Բաբակ իր այդ յուսահատ վիճակին մէջ իսկ տարակոյտով պիտի ընդունէր Սահլի հիւրընկալութիւնը: Իսկ Սահլ իր կարգին կ'երեւի դեռ կը վախնար Բաբակին ձեռք տալէ, դուցէ անոր հետ գտնուած հետեւորդներուն պատճառաւ, կամ դուցէ Սիւնիքի մէջ Բաբակի կողմնակիցներէն:

Վերջապէս Բաբակ կը մեկնի Սահլի բերդը: Բաբակի եղբայրը՝ Ապու Ալլահ յաջորդ օր, այսինքն օր մը Սահլի քով հիւր մնալէ վերջ, կը մեկնի Իպն Խալիֆանուսի բերդը, հոն ձմեռելու համար: Սահլ անմիջապէս լուր տուաւ արար ընդհանուր հրամանատար ալ-Աֆշինի, որ Բաբակ իր բերդը կը գտնուի: Տարբերէ կը տարբերի Մասուտի պատմիչը, որ կ'ըսէ թէ Սահլ իպն Մնբատ ճաշկերոյթ մը տուաւ Բաբակին, բայց վերջինս ընդվզեցաւ Սահլի իր հետ ուտելուն դէմ, որուն վրայ Սահլ երկաթեայ կապանքի տակ առաւ Բաբակը:

Տարբերի կը շարունակէ պատմել թէ ալ-Աֆշին նախ լրտեսում մը հաստատեց թէ Սահլ ճիշտ ու ճիշտ Բաբակն է, որ ունի իր բերդին մէջ: Սահլ դեռ զգոյշ է Բաբակէն: Ալ-Աֆշին իր հրամանատարներէն Ապու Սալիտը եւ Բուղարաւհը զրկեց որ ըստ Մասուտի՝ Բուղարաւհ կը կոչուէր, որուն հետ ալ-Աֆշին զրկեց նաեւ 4-000 զինուոր՝ Բաբակը ձերբակալելու համար: Իբն ալ Ատիր՝ Բուղարաւհը կը կոչէ Բուրաւաբաւ, իսկ Դինուարի՝ Եուգրաւաւ:

Տարբերի կը վկայէ որ ալ-Աֆշինի զոր-

կած հրամանատարները իրենց հետ ունեին զինուորներ, որոնք եթէ իրապէս՝ Մասնակի ըսածին պէս՝ 4.000-ի չափ էին, այն ատեն աւելի կը հաստատուէր մեր կասկածը՝ թէ Մասնակի առանձին եւ անոյժ չէր գտած Բաբակը, եւ վերջինս ղեկ ոյժ ունէր։ Մասնակի եւ արար հրամանատարներուն ձեռք առած միջոցները՝ Բաբակը բերդէն դուրս, յանկարծակի, որսի միջոցին ձերբակալելու, որեւէ տարակոյս չեն թողուր որ վտանգաւոր էր Բաբակ, որ եթէ յանկարծակի եւ ապահովաբար չձերբակալուէր, կրնար ղեկ փորձանք ըլլալ Մասնակի եւ ալ-Աֆշինի ալ։

Բաբակ այսպէս որսի ատեն յանկարծակի ձերբակալուեցաւ ալ-Աֆշինի հրամանատարներէն։ Բար Հերբայուն տարբեր կը պատմէ դէպքը՝ ըսելով. «Երբ Բաբակ, իսլամադինի ապստամբը, տեսաւ որ իր կուսակիցները անդոր են, իր դրամները բռնուց (գրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ դէպի Հոռոմոց Երկիրը։ Եւ երբ Հայաստան հասաւ՝ որոշ աղնուական մը, որուն անունը Իսթաֆանուս էր, զինքը շողմեց եւ զինքը իր տունը տարաւ՝ իբր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր երկաթ կապանքներ զարկաւ։ Եւ երբ Մուտաղիմ իմացաւ (ասիկա), Աֆշինը՝ իր բանակին հրամանատարը զրկեց Իսթաֆանային նուէրներով, եւ անոնք առին Բաբակը եւ սպաննեցին։ Որովհետեւ այս մարդը բնաջնջած էր աւելի քան հարիւր հազար արաբական զօրքեր»։

Բար Հերբայուն նախ չի յիշեր Մասնակի Մերատը՝ իբր գլխաւոր ղեկավար Բաբակը ձերբակալողներուն դորձակից. այլեւ Իսթաֆանուս հայ իշխանը ցոյց կու տայ բուն ձերբակալող։ Բար Հերբայուն ալ վերոյիշեալ անանուն արար պատմիչի հատուածին համաձայն՝ Բաբակի ընկերացող հետեւորդներու գոյութիւնը կը հաստատէ եւ զանոնք մինչեւ 400 հոգինոց պատկանելի ոյժի մը կը հասցնէ։

Մասնակի վարձատրուեցաւ նիւթապէս ալ։ Բաբակ, ըստ Տարբարիի, կ'այլադէպ Մասնակի իր ձերբակալուելու պահուն, եւ ինք պատրաստ էր արաբացուց տուածէն աւելիովն իսկ զինքը վարձատրելու՝ եթէ դրամ էր Մասնակի ուղածը։ Տարբարիի, այս վկայութիւնը, իր ձեռով մեղի խորհիլ կու տայ որ Մասնակի դրամի համար չէր որ Բաբակը արաբացուց կը յանձնէր։ Մասնակի հայրենիքը աւերողէն վրէժ կ'առնէր։ Տեսնաւ որ Մակդիսի կը վկայէ Մասնակի Բաբակէն կախանաբորութիւնը, իր մօր, քրոջ եւ կնոջ անկէ պղծուելը։

Ետեւորդի համաձայն՝ ալ-Աֆշին խոստացած էր Բաբակ իրեն յանձնողին մէկ միլիոն դրամ, այսինքն 40-50.000 ոսկի զինար։ Հաւանաբար այս եղաւ Մասնակի վարձքը։

Բաբակ զրկուեցաւ իսլամադինի, եւ ինչպէս ըսինք՝ սպաննուեցաւ⁽⁹⁾։

Յ. ԲԻԻՐՏԵԱՆ

(Շարունակելի)

(9) Տարբարիի հետ գերի բռնուեցան, ըստ Տարբարիի, 3.300 հոգի. իսկ ըստ Իսկանդարի թաւառումի՝ 3.300 հոգի։ Իսկ Բաբակի ղեկավարէն փրկուեցան 7.600 կիներ եւ մանկահասակներ, զարձակ ըստ Տարբարիի, թէեւ Իսկանդարի միայն կիներ կը նշանակէ։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«ԳԻՐՔ ԶԵՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ» ՄԱՍԻՆ

Ա. - ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Յօդուածիս նպատակն է ուսումնասիրել «Գիրք Զեռնադրութեան» մատենին խորագիրները՝ «Պուղումն Հերաց»-էն մինչեւ Կիսասարկաւադութիւն։ Այս խորագիրներուն վրայ, շատ մը ղեկողութիւններ եղած են, դրաւոր կամ բերանացի, զոր հետեւեալ բառերով ամփոփած է Գերպո. Յարութիւն Ռուպեան, անտիպ մնացած ձեռագրի մը մէջ « Osservazioni sul Pontificale Armeno» վերնագրով. «Osservo anzitutto che mancano delle rubriche, ovvero non sono esse ben precisate, onde avere l'uniformità delle sacre funzioni» (manoscritto, pg. 7):

Նոյնպէս վարդապետուի Սերովրէ վ. Դաւթեան, Եպիսկոպոս Անուոյ, ձեռագիր աշխատասիրութեան մը մէջ, Ս. Կարգերու մասին՝ ըսելով. «Այս կարգ Զեռնադրութեան չեն գերծ ի վրիպից, մանաւանդ ի բանս եւ ի բացատրութիւնս խորագրաց» (Կանխարան)։

Արդ, մենք կը կարծենք որ խրատներու այս անճշտութիւնը կամ պակասը կարելի է դարձանել հայ եկեղեցւոյ աւանդութեամբ եւ զանազան բնագիւղներու բաղդատութեամբ, ինչ որ ստորեւ պիտի ջանանք ճշդել, փարատելով անոնց մասին եղած կարգ մը քննադատութիւնները։

1. — Խնկարկութիւն։ Վաղարշապատու «Մաշտոց Զեռնադրութեան» եւ Պոլսոյ «Մաշտոց քահանայապետական» ձեռեւեալ խորագիրը վը կրեն ի կարգ Մաղմուսերդաց եւ Աւելածուաց. «Եպիսկոպոսն իսկ սուրբ սեղանոյն...»։ Այս խորագիրը չեն յիշեր ո՛չ Վենետիկոյ Միթրարեան Հայրերու «Գիրք Կարգաց եւ Զեռնադրութեան»-ը, եւ ո՛չ ալ Հոռոմի Լե-

ւոնեան վարժարանի խմբարտիպ «Կանոնք Կարգաց եւ Զեռնադրութեան»-ը։ Մասկայն, թէ՛ Լեւոնեան վարժարանի եւ թէ՛ Սերովրէ Դաւթեանի «Կարգ Զեռնադրութեան»-ը Կոչումէն առաջ խնկարկութիւն մը կը յիշեն, բայց չեն կրկնէր զայն «Պուղումն Հերաց»-ի արարողութեանէն առաջ, թէեւ կոչումը անջատ կ'ընեն։ Արդ՝ աւանդութեան ղեկները որ խնկարկութիւնը տեղի կ'ունենար ամէն արարողութեան սկիզբը։ Այսպէս. «Une fois le clergé entré dans le sanctuaire, on procède, comme au début de toute fonction solennelle, à l'encensement du temple et de la communauté» (Proche-Orient chrétien, VII. Juil.-Sept. 1957, pg. 251).

Նոյնը կը հաստատէ Մեծարդոյ հայր Al. Raes, S. I. աւելցնելով որ թէ՛ առաւօտը եւ թէ՛ իրիկունը կը կատարուէր խնկարկութիւնը։ Նոյնիմաստ խօսքեր ունի նաեւ «Գիրք Ժամակարգութեան որ կոչի Աստեանի», տպուած Մարտիրոս մէջ 1673ին. «Յառաջ քան դամեանայն (Գիրքային Ժամերգութեան մասին է խօսքը) պարտ է փակակալին... խունկ արկանել եւ հնչեցուցանել զղանկակ» (էջ 4)։ Նմանապէս Երեկոյեան Ժամերգութեան համար կ'ըսէ. «Յառաջ լուցանէ փակակալն զկանթեղան եւ խնկարկէ եւ ապա հարկանէ զղանկակս» (էջ 9)։ Հետեւաբար խնկարկութիւնը Կուրակի եւ Չորս Աստիճաններու արարողութեան սկիզբը կատարելու է, ըստ մեզի, նկատի ունենալով նաեւ որ սոյն արարողութիւնը Ժամերգութեանէն եւ պատարագէն բոլորովին անկախ տեղի կ'ունենայ։

2. — Ազօրքը կանգուն։ Եպիսկոպոսը